

Արսրուս Մ. Հակոբյան
դասմ. գիտ. դոկտոր

ՄԻԱՅՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱԿՏԸ. ընդունման 90-ամյակի առիթով

Հայաստանի առաջին Հանրապետության անկախության հռչակումից հետո նորանկախ Հայոց պետականության միջազգային-իրավական կարգավիճակը հստակեցրած ամենակարևոր փաստաթուղթը 1919թ. մայիսի 28-ի «Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտն» էր:

Մինչ օրս ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում հայ պատմաբանների, իրավաբանների ու քաղաքագետների կողմից չի տրվել այս փաստաթղթի ճշգրիտ գիտական գնահատականը: Ժամանակին սրանում իր դերն է խաղացել 1919թ. մայիսի 28-ից հետո Հայաստանի Հանրապետության ընդդիմադիր ուժերի, մասնավորապես՝ Հայ ժողովրդական, Հայ ռամկավար, Մ.Գ. Հնչակյան կուսակցությունների որդեգրած վերապահ վերաբերմունքը ՀՀ կառավարության և խորհրդարանի այս հիրավի՝ պատմական նշանակության քայլի հանդեպ: Մասնավորապես ՀԺԿ-ն մտահոգված էր նրանով, որ

«Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտը» ընդունվել է հաշվի չառնելով Փարիզում գտնվող Ազգային պատվիրակության և Պողոս Նուպար փաշայի կարծիքը, իսկ որոշ ուժեր էլ խոսում էին փաստաթուղթը ոչ թե խորհրդարանի, այլ կառավարության կողմից ընդունվելու անթույլատրելիության մասին: Ու մինչ Հայաստանի Հանրապետության քաղաքական ընդդիմությունը ազատորեն վիճարկում էր այս ակտի ընդունման նպատակահարմարությունը, Հայաստանի Հանրապետության տարածքում հաստատված բազմահազար արևմտահայությունը տվյալ փաստաթղթի մեջ տեսնում էր իր նվիրական երազանքների իրականացման սկիզբը:

Իսկապես, տեղի էր ունեցել կարևորագույն նշանակություն ունեցող իրադարձություն՝ Հայաստանը միացած էր հայտարարել իր երկրի երկու մասերը, որովհետև Մեծ եղեռն ապրած ժողովուրդը մեծ հատուցում էր պահանջում,

և դա պետք է լիներ կորուսյալ հողերի վերադարձը նրա օրինական տիրոջը:

Դեռևս Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Փարիզ մեկնող Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը 1918 թ. դեկտեմբերի 7-ին կառավարությունը հրահանգ էր տվել խաղաղության վեհաժողովում պաշտպանել Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության և Արևմտյան Հայաստանի նահանգների միավորումից ստեղծել Միացյալ Հայաստան¹:

1919 թ. մայիսի 28-ի ակտի ընդունման մյուս կարևոր կովանը 1919 թ. փետրվարի 6-13-ը Երևանում գումարված Արևմտահայերի 2-րդ համագումարի քաղաքական բանաձևն էր՝ «Ազատ և Միացյալ Հայաստան» ստեղծելու մասին, որում դարձյալ առաջ է քաշվում արևելահայ և արևմտահայ հատվածների միավորմամբ մեկ միասնական պետության ստեղծման գաղափարը²:

Այս երկու առաջարկությունների հիման վրա 1919 թ. փետրվարին Եվրոպայում գտնվող հայկական երկու պատվիրակությունները մշակել և ընդունել էին հայկական բաղձանքներն արտահայտող մի հուշագիր (memorandum), որով պահանջվում էր ստեղծել Միացյալ և Անկախ Հայաստան՝ մեկ ամբողջական տարածքի վրա³:

1919 թ. փետրվարի 26-ին ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանը և Հայ Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուպար փաշան մասնակցել էին Փարիզի խաղաղության վեհաժողովի 10-ի խորհրդի նիստին և ներկայացրել հայկական պահանջները⁴: Հայկական միացյալ պատվիրակությունը կոնֆերանսին ներկայացրել էր նաև ապագա Միացյալ Հայաստանի՝ արդեն գծված քարտեզը: Հայկական պահանջների հուշագիրը վավերացվել էր նաև 1919 թ. փետրվարի 24-ից մինչև ապրիլի 21-ը Փարիզում գումարված Արևմտահայ Ազգային համագումարում⁵:

Հատկանշական է նաև, որ 1919թ. գարնանը խորհրդարանում առաջացած սուր հակասությունների պայմաններում Հայաստանի Խորհուրդը 1919թ. ապրիլի 27-ին ընդունել էր աշխատանքները մեկ ամսով դադարեցնելու և այդ ընթացքում խորհրդարանի իրավունքները կառավարությանը հանձնելու մասին ՀՅԳ-ի և Հայ ժողովրդական կուսակցության երեք կետից բաղկացած օրինագիծը, որում նշվում էր. «1. Խորհրդի աշխատանքները դադարեցնել մեկ ամսով, 2. դադարի միջոցին խորհրդի բոլոր իրավունքները(ընդգծումը մերն է-Ա. Հ.) հանձնել կառավարությանը և 3.հանձնարարել կառավարությանը արտա-

¹ Տե՛ս Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետև՝ ՉԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 183, ք. 7:

² Տե՛ս Համառոտ տեղեկագիր արևմտահայ երկրորդ համագումարի, Ե., 1919, էջ 13-14:

³ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 291, ք. 28:

⁴ Տե՛ս Ահարոնյան Ա. Սարդարապատից մինչև Սեվր և Լոզան, Պոսթըն, 1943, էջ 10:

⁵ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, ք. 149:

կարգ կարևորության դեպքում հրավիրել խորհրդի արտակարգ նիստ⁶»: 1919թ. մայիսի 28-ին օրենքի այս պահանջը նույնպես ճշգրիտ կերպով կատարվեց ՀՀ կառավարության կողմից:

Ուստի, նկատի ունենալով, որ ստեղծում է Հայաստանի անկախության առաջին տարեդարձը և հաշվի առնելով մի շարք ներքին ու արտաքին անհետաձգելի հանգամանքներ՝ ՀՀ կառավարությունը 1919 թ. ապրիլի 27-ի օրենքով իրեն տրված օրենսդրական լիազորությունների հիման վրա, մայիսի 26-ին և 27-ին ընդունեց երկու կարևոր ու սկզբունքային «Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտ» և «Հայաստանի Խորհրդի ներկայ կազմը Արևմտահայ Գործադիր մարմնի 12 անդամներով ուժեղացնելու մասին⁷» օրենքները:

ՀՀ կառավարության նախապես ընդունած այս երկու կարևոր իրավաբանական փաստաթղթերը 1919 թ. մայիսի 28-ին՝ Հայաստանի անկախության առաջին տարեդարձի օրը, հռչակվեցին պաշտոնական կերպով դրանով իսկ ազդարարելով Հայաստանի երկու մասերի միավորման և Միացյալ Հայաստանի անկախությունը հռչակելու մասին:

Անկախության տարեդարձի տոնակատարության կապակցությամբ՝ հիմնվելով 1919թ. ապրիլի 27-ի օրենքի 3-րդ կետի վրա, հրավիրվեց Հայաստանի խորհրդի (խորհրդարանի) ու կառավարության հանդիսավոր նիստ, որում նախագահում

ՄԻԱՅՆԱԿ ՀՍՅՈՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՆ ՅԱՅՏԱՐՄՐՄԱՆ ԱԿՏԸ

Հայաստանի ամբողջով ինչը մերականցելու և ժողովրդի լիակատար սպառնալիքին ու բարգաւաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, համահայն բախմուղակ Հայ ժողովրդի միահամուռ կամրի և ցանկութեան յայտարարում է, որ այսօրանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իրեն անկախ պետական միութիւն:

Պղկ մի տարի ուսաջ ուսաշայերև հասագումարից ընտրած Հայց Ազգային Խորհուրդը յայտարարեց իրեն Անգրիզիկանան հայկական գաւառների բարձրագոյն իշխանութիւն: Էջգային Խորհրդի կազմած կառավարութիւնն այդ ցարքական ակտի մասին պաշտոնապես պետութեանց ներկայացուցիչներին յայտնելուց յետո՛յ այս մի տարւայ մէջ փաստորեն հաստատել է իր իշխանութիւնն Անգրիզիկան հայկական գաւառներում:

1919 թ. փետրար ամիսն Էջեան քաղաքում կայացած Արեւմտահայ երկրորդ Համագումարը հանդիսաւոր կերպով յայտարարեց, որ նա Հայաստանը միացեալ է անկախ է ճանաչում:

Այլև՛ Անգրիզիկանում և Գլմանեան կայսրութեան շահմաններում գտնած պապեմական հայկական երկրների միացման և անկախութեան այս ակտը կատարելով՝ Հայաստանի կառավարութիւնը յայտարարում է, որ միացեալ Հայաստանի պետական ճին է Արամկաթար Հանրապետութիւն և որ ինքը հանդիսանում է միացեալ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը:

Այս լիտով՝ ներկայումս Հայաստանի ժողովուրդն է իր ամբողջացած հայրենիքի գերագոյն տերն ու անօրէնք, և Հայաստանի կայսրականն ու կառուցաւրութիւնը հանդիսանում են միացեալ Հայաստանի պատա ժողովուրդը շարկապող բարձրագոյն օրէնսդիր և գործողիք իշխանութիւնը:

Հայաստանի կառավարութիւնը այն ակտը հրատարակում է 1919 թ. Ապրիլի 27-ի պարլամենտի որոշմամբ կառավարութեանը տրւած յատուկ լիազօրութիւնների շինան վրայ:

Մինտրների Խորհրդի Նախագահի և Արտաքին Գործերի Մ-ի պաշտոնակատար Ալ. Խաչիսեան
Նեքին Կործերի Մինիստրի պաշտոնակատար Ս. Մանասեան
Չինուրական Մինիստր Վեներայ Մայր Գ. Արարատեան
Արցախագաւառեան Մինիստրի պաշտոնակատար Ս. Չեչեան
Նախային Կրթութեան Մինիստր Գ. Մեխիբեկյան
Մարտապարտեան Մինիստր Ս. Քարանան
Պարենուորման Մինիստր Գ. Վերիշեան
Գիտնական Մինիստրի պաշտոնակատար Գ. Զարգիսեան
Կործերի կառավարիչ Գ. Խաչիսեան

1919 թ. Մայիսի 28 թ. Էջեան քաղաք:

⁶ Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919թթ., մաս 1, Ե., 1919, էջ 61:

⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 282, թ. 9:

էր կրթութեան նախարար, ՀԺԿ անդամ Գ. Մելիք-Ղարաբաղցի: Վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանը կարգաց Հայաստանի միացման վերաբերյալ հետևյալ պաշտոնական հայտարարագիրը (հռչակագիրը).

«Հայաստանի ամբողջութիւնը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատութիւնն ու բարգաւաճումն ապահովելու համար Հայաստանի Կառավարութիւնը, համաձայն բովանդակ Հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկութեան, յայտարարում է, որ այսօրանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մեծնջենադէտ միացած են իբրև անկախ ղեկավար միութիւն:

Ուղիղ մի սարի առաջ ռուսահայերի համագումարից ընտրած Հայոց Ազգային Խորհուրդը հայտարարեց իրեն Անդրկովկասեան հայկական գավառների բարձրագոյն իշխանութիւն: Ազգային խորհրդի կազմած կառավարութիւնն այդ ֆաղափական ակտի մասին դաժոճադէտ Պետութեանց ներկայացուցիչներին յայտնելուց յետոյ՝ այս մի սարայ մէջ փաստօրէն հաստատել է իր իշխանութիւնն Անդրկովկասի հայկական գավառներում:

1919 թ. փետրուար ամսին Երևան ֆաղափում կայացած Արևմտահայ երկրորդ Համագումարը հանդիսաւոր կերպով յայտարարեց, որ նա Հայաստանը միացեալ և անկախ է ճանաչում:

Այժմ Անդրկովկասում և Օսմանյան կայսրութեան սահմաններում զտնված դադդենական (արխիվային սարբերակներից մեկում՝ «հինաւորց» - Ա. Հ.) հայ

կական երկրների միացման և անկախութեան այս ակտը կատարելով՝ Հայաստանի Կառավարութիւնը յայտնում է, որ Միացեալ Հայաստանի ղեկական ձևն է Ռամկավար Հանրադատութիւն և որ ինքը հանդիսանում է Միացեալ Հայաստանի Հանրադատութեան Կառավարութիւնը:

Այսուհետև ներկայումս Հայաստանի ժողովուրդն է իր ամբողջացած հայրենիքի գերագոյն սերն ու սնօրէնը, և Հայաստանի Պարլամենտն ու Կառավարութիւնը հանդիսանում են միացեալ Հայաստանի ազատ ժողովուրդը շարժապարտ բարձրագոյն օրէնսդիր և գործադիր իշխանութիւնը:

Հայաստանի կառավարութիւնը սոյն ակտը հրատարակում է 1919 թ. Ապրիլի 27-ին Պարլամենտի որոշմամբ Կառավարութեանը տրած յատուկ լիազորութիւնների հիման վրայ*»:

Ալ. Խատիսյանի ընթերցած այս հայտարարագիրը ներկաների կողմից ընդունվեց կեցցեներով ու որոտնդոտ ծափողոյններով:

1919 թ. մայիսի 28-ին ՀՀ անկախութեան առաջին տարեդարձի և «Միացյալ Հայաստանի անկախութեան հայտարարման ակտ»-ի կատարելութեամբ Երևանում անցկացվեցին շքերթ, գորահանդես, տոնակատարութիւններ, հայտարարվեց համաներում, հուշարձանի կառուցման մրցանակաբաշխութիւն և այլն: Միացյալ Հայաստանի մասին այս պատմական ակտը ուրախութեամբ ողջունեցին Հայաստանի Հանրապետութեան պետական և հասարակական շատ կազմակերպութիւններ, արտասահմանյան մի շարք երկրներ:

* ԳԱԱ. ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 84: Տե՛ս նաև՝ ԳԱԱ ֆ. 275, ց. 1, գ. 80, թ. 64:

րի դիվանագիտական ներկայացուցիչներ: Հայաստանի երկու մասերի միացման մասին կառավարության հայտարարությունը սրտագին ողջուցեց նաև Արևմտահայ գործադիր մարմինը:

«Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտ»-ի ընդունումը և հռչակումը պատմական կարևորագույն նշանակություն ունեցող իրադարձություն էր: Ընդունված փաստաթուղթը և նրա հիման վրա իրականացված Հայաստանի Հանրապետության Խորհրդի (խորհրդարանի) ու Արևմտահայ Գործադիր մարմնի 12 անդամների միավորումն ու համախմբումը մեկ տանիքի տակ նշանակում էր, որ հայ ժողովրդի երկու հատվածների օրինականորեն ընտրված ներկայացուցիչները իրենց տրված հստակ լիազորությունների շրջանակներում, ձևավորում էին Միացյալ Հայաստանի նախախորհրդարանը: Այսինքն՝ նրանք կյանքի էին կոչում բնությանը միմյանցից զատված հայ ժողովրդի երկու հատվածների՝ մեկ միասնական պետություն ունենալու պատգամը և այն մատուցում քաղաքակիրթ աշխարհին որպես ողջ հայության հստակորեն արտահայտված կամք: Սա միջազգային իրավունքի բոլոր նորմերով ընդունված իրավական ակտ էր, որը լիովին համապատասխանում էր Առաջին աշխարհամարտի ավարտից հետո տարածաշրջանի մյուս ժողովուրդների որդեգրած ինքնորոշման պրակտիկային և՛ իր ձևով, և՛ բովանդակությամբ: Պատճառն այն է, որ ճիշտ մույն կերպ՝ իրենց Ազգային խոր-

հուրդների միջոցով, 1918-ին սեփական անկախության հաստատման ճանապարհն էին բռնել Վրաստանն ու Ադրբեջանը: Ավելին, ի տարբերություն Ադրբեջանի, որը ձևավորվեց որպես պետություն սուկ 1918 թվականին, Արևմտյան Հայաստանը «Հայաստան» հավաքական անվամբ ճանաչվել էր միջազգային դիվանագիտության կողմից՝ սկսած 1878 թվականից, իսկ նրա ժողովրդի իրավունքները Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին ճանաչվել էին անգամ Օսմանյան կայսրության կողմից՝ Ռուսաստանի հետ ստորագրված 1914թ. հունվարի 26-ի (փետրվարի 8-ի) համաձայնագրով: Ուրեմն՝ դրան անմիջապես հետևած Մեծ եղեռնի, այսինքն՝ ցեղասպանության ճանապարհով արևմտահայությանը իր պապենական հողերից դուրս մղելու հանցագործությունը ոչ թե նվազեցնում, այլ ընդհակառակը՝ ամրապնդում էր Արևմտահայերի երկու համագումարներում՝ 1917 և 1919թթ. ընտրված մարմինների օրինականությունը (լեգիտիմությունը): Քանզի դրա հետևանքով առաջ էր գալիս ոչ միայն Արևմտյան Հայաստանի հանդեպ արևմտահայության իրավասությունների, այլև միջազգայնորեն ճանաչված «Հայաստանի», տվյալ դարաշրջանում՝ Արևմտյան Հայաստանի և նրա ժողովրդի դեմ կատարված հանցագործության համար Օսմանյան կայսրության պատասխանատվության հարցը:

Այսպիսով, «Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտը» իրավական առումով անթերի

ու անխոցելի փաստաթուղթ է, որը չի կորցրել իր իրավաքաղաքական նշանակությունը նաև այսօր՝ Հայաստանի երրորդ Հանրապետության օրոք, որը համաձայն 1990թ. օգոստոսի 23-ին ընդունված անկախության Հռչակագրի, հանդիսանում է Հայաստանի

առաջին Հանրապետության ժողովրդավարական ավանդույթների շարունակողը: Իսկ դրանց շարքում իր առանձնահատուկ տեղն ունի 1919թ. մայիսի 28-ին հռչակված «Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտը»:

**ACT OF THE INDEPENDENCE OF A UNITED ARMENIA
On the occasion of the 90th anniversary of its adoption**

Ararat M. Hakobyan